# ԽԱՆԼԱՐԻ ՇՐՋԱՆ

## 85. ՍԱՐՈՎ ԳՅՈՒՂ

***821. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** վրա, որը գտնվում է գերեզմանատանը.*

Տապանս Մէլիքին. ։ՌՃԻԲ։ Էր (1673)։

*Հրատ. Բարխուդարեանց, 33։*

## 86. ՄՌՈՒՏ ԳՅՈՒՂ

*Այս գյուղն իր ներկա տեղում հաստատվել է վերջին դարերում, իսկ եկեղեցին շինվել է 1881 թվականին։ Հնում այն եղել է ավելի բարձր տեղում, դեպի Հաչիքենդ տանող անտառամիջի ճանապարհի վրա։ Այժմ այդ հին գյուղատեղի ընդարձակ ավերակները մեծ մասամբ ծածկված են ծառերով և թփերով. գյուղատեղին կոչվում է «Քյոշք» (ապարանք-դղյակ)։ Գյուղատեղում մնացել են փոքր եկեղեցու հիմնապատերը (որը Ջալալյանցի ժամանակ կանգուն է եղել՝ 1841 թ. առաջ) և ցաք ու ցրիվ խաչքարեր։ Ջալալյանցի ասելով հուշարձանի ներսում գտնվող խաչքարի մասին ավանդություն է եղել, որ այն օծել է Մեսրոպ Մաշտոցը, որի պատճառով էլ կոչվում է Մեռոնոտ կամ Մռուտ։ Գանձակի ս. Հովհաննես եկեղեցու մեջ թաղված է Մռուտ անապատի առաջնորդ Հարություն վարդապետը, 1800 թ. գ (արձ. № 815)։*

***822. ԽԱՉՔԱՐ**, գեղաքանդակ, գտնվում է գյուղատեղից մոտ մեկ կիլոմետր հարավ-արևմուտք, բացատի մեջ. խաչքարն ընկած է և նրա մոտ պատվանդան չկա. ստորին մասում տողերի մեջ 5 տող.*



ԹՒԻ. ։ՌԼԳ։ ԵՍ ՊԱՒՂՈՍ Ե⌜ՐԻ
Ս⌝ԱՀԱԿ ԿԱՆԳՆԵՑԱՔ ՁԽԱՉՍ| Ի
ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԻՒՆ. ՀԱՒՐԵՂԲԱՐ
Մ|ԵՐՈ ԲԱՐՍՂԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ
ՀԱՒՐ ՄԵՐ⌜Ո⌝ Ա|ԿՈԲԱ. ՈՐՔ ԵՐ-
⌜ԿՐ⌝ՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ⌜ՔՍ⌝.
ԱՂԱՉԵՄ⌜Ք⌝։

823. ԵԿԵՂԵՑՈՒ ավերակները բավական հեռու են նախորդ խաչքարից (դեպի արևելք). մնացել են հիմնապատերը, ուր ընկած է սեղանակերպ բարավորը՝ կոտրված երեք մասի. կենտրոնում, խորանի մեջ՝ 6 տող.



Ի Թ(ՎԻ)Ն. ՀԱՅՈՑ ։ՉԹ։ (1260)| ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՒ ՈՂ⌈ՈՐՄ⌉|ՈՒԹԲ. ՔԻ. ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ⌈ԵՍ ՍԱ⌉|ՐԳԻ⌈Ս⌉ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻ⌈Ս Ա-ՌՍ.⌉| ՋՆՈՐՀՈՒԹԲ. ՏՐ. ՈՎԱՆԻՍԻ.| ՊԱՐՈՆՈՒԹԲ ԲԱԳՐԱՑԻՆ։

Հրատ. Բարխուդարեանց, 272։ Միայն սկզբի չորս տողը և սխալ թվականը՝ ։ՋՁ. (1457)։

824. ՆՈՒՅՆ ԲԱՐԱՎՈՐԻ խորանի վերին եզրին, թերևս հավելում է նախորդի, մանրատառ մեկ տող.

ՀԱՍՏԱՏԵՑԻ ԶՑԱՑՏՆ(ՈՒԹԵ) . . . . . . . .

825. ՆՈՒՅՆ ԲԱՐԱՎՈՐԻ ձախ եզրին, մանրատառ 10 տող.

ԱԾ. ՈՂ(Ո)ՐՄԵԱՑ| ՄԽԻԹ|ԱՐԱ, ՈՐ| ԱՒԳՆԵՑ| ԵԿԵՂԵՑ|ՈՑՍ ՍԻ . . . ՈՐ ⌈ԱՒ⌉Գ⌈Ն⌉ԵԱՑՆ ՇԱՏ|. ԱԿՈԲՈ . . . ՏՐ։

Ծանոթ. Վերջին երեք տողերը մանրատառ են, հավանաբար հետո ավելացրած։

826. ՆՈՒՅՆ ԲԱՐԱՎՈՐԻ աջ եզրին, մանրատառ, 10 տող.

ԱԾ. ՈՂՈՐՄԵ(Ա)Յ| ՄԽԻԹԱՐՋԻ|, ՈՐ ԱՒԳՆԵ(Ա)Յ| ԵԿԵՂԵՑՈՑՍ| . . . . . .

Ծանոթ. Մնացած տողերն ավելի շատ են ջարդոտված և իմաստն անհասկանալի է։

827. ԽԱՉՔԱՐ, մեծ, գեղաքանդակ. պատվանդանի հետ ընկած է կողքի, գտնվում է եկեղեցուց 15 մետր արևելք՝ «Խաչի ջուր» աղբյուրի մոտ։ Հարավային նեղ կողի տողասկիզբներն ու վերջերը ջարդոտված՝ գեղագիր և մանրատառ 34 տող.



Ի⌉ ԴԱՌՆ ԵՒ Ի Ն⌈Ե-
Ղ⌉ ԺԱՄԱՆԱԿԻ⌈Ն
ՑՈ⌉ՐՈՒՄ ԽՌՈՎ⌈Ք⌉
ԲԱԶՄԱՑ ԴԻ⌈Մ⌉
ԵՐ Ի ՎՐԱՑ ՔՐԻՍ
ՏՈ⌉ՆԷԻՑ, ԱՒԳՆ⌈ԱԿ
ԱՆ⌉ ԵՒ ՈՋ ՈՒՍՏԵՔ. ⌈ԱՒ-
ԳՆ⌉ԱԿԱՆՈՒԹ⌈Բ.
ԱՑ⌉. ԵՒ ԹԱԳ⌈ԱՒՈ-
ՐԻՆ⌉ ՎՐԱՑ ⌈ԼԱ
ՇԱ⌉ԱՑ ԵՒ Ի . . .
. . . ՊԱՐՍԻՑ
. . . ՀԱՅՈՑ
ՏՆ. ՅՈՎԱ⌈ՆԷ

Ս · · · · · · · ·
ՑԱՌԱՋՆ⌜ՈՐԴ-
ՈՒԹԲ⌝. ՍԲ. ՈՒԽՏ⌜ԻՍ⌝
· · · · · · · ·
· · · · · · · ·
· · · · · · · ·
· · · · · · · ·
· · · · · · · ·
· · · · · · · ·
· · · · ԿԱՆ-

⌜ԳՆԵՑ⌝Ի ԶՍԲ. ԳՐԻ-
ԳՈՐՍ Ի ԲԱՐԷԽ-
⌜Ա⌝ՒՍՈՒԹԻ. ՀԱՒՐ
⌜ԻՄ⌝ՈՑ ԳՐԻԳՈՐ
ԵՒ ՄԱՒՐ ԻՄՈՑ
· · · · · · · ·
⌜ՈՐՔ⌝ ԶԵՐԿՐՊԱԳ-
ԷՔ⌝ ԶՄԵԶ · · ·
· · ՑԱՂԱՒԹ⌜Ս⌝
⌜ՑԻ⌝ՇԵՍՋԻՔ։

Ծանոթ. *Արձանագրության բովանդակությունը կապված է 1222 թ. Գանձակում տեղի ունեցած վրաց և ղփչաղների պատերազմի հետ։ Գրիգորը, որի հիշատակին կանգնեցվել է խաչքարը, պետք է լինի Հաղբակի որդին, որը նահատակվեց։ Վերջինիս որդու անունը կարելի է վերականգնել Վասակ, իսկ կնոջը՝ Զազա։*

## 87. ԱԲԼԱՀ ԳՑՈՒՂ

*Այս գյուղն այժմ տեղափոխված է և գտնվում է իր հին վայրից մոտ երկու կիլոմետր հեռու, դեպի արևելք։ Նախկին գյուղատեղում մնում է կանգուն կոփածո քարերով թաղածածկ եկեղեցին՝ ս. Մինաս անունով (հավանաբար* XVI—XVII *դարերի)։ Եկեղեցին խնամվել է մինչև* XIX *դարի վերջերը։ Այդ են ապացուցում երկու արձանագրություններ, որոնցից մեկը հայտնում է, որ հարավային մուտքը շինվել է 1892 թ. Աբլահեցի Միքայել Սարդսյան-Ղազանչյանի ծախսով, իսկ մյուսը, որ նույն մուտքի առաջ շինված զանգակատունը կառուցվել է 1896 թ. նույն Միքայելի և իր հայր Սարգսի կողմից։*

*Ավելի հին մի արձանագրություն գտնվում է հարավային մուտքի մոտ, պատի մեջ ագուցված կիսակամար մի քարի վրա, որն ունի 1732 թ.։ Սա եկեղեցու կառուցմանը չի վերաբերում, նորոգումների հիշատակություն պետք է համարել, որոնք արվել են Թահմազ շահի ավերածություններից հետո։ Այդ քարը հին բարավոր է, հավանաբար նույն հարավային մուտքի։ Ղազանչյաններն այդ մուտքը լայնացնելու և ձևավորելու նպատակով քարը հանել և տեղադրել են պատի մեջ։*

*Եկեղեցուց արևմուտք, թեք լանջի վրա տարածված է հին գերեզմանատունը, ուր կան մի քանի արձանագրված խաչքարեր։*

***828. Ս. ՄԻՆԱՍԻ** հարավային պատի մեջ ագուցված հին բարավորի վրա.*

